

Հայտարարություն

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ իրավաբան-իրավական նույնականացնողների թափուր հաստիքները համալրելու համար

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ իրավաբան-իրավական նույնականացնողների թափուր հաստիքները համալրելու համար

Պարտականությունները և լիազորությունները՝

ա) իրականացնելու է թարգմանված իրավական ակտերի և փաստաթղթերի իրավական վերանայում,

բ) իրականացնելու է թարգմանված իրավական ակտերի լեզվաբանական գնահատում՝ օրենսդրական տեխնիկայի կանոնների հետ համապատասխանության մասով,

գ) աջակցելու է թարգմանիչներին և եզրաբաններին իրավական համապատասխանեցման ենթակա միջազգային և Եվրասիական տնտեսական միության վերազգային իրավական հասկացությունների տեղայնացման հարցում,

դ) մասնակցելու է եզրաբանական նյութերի, շտեմարանների, ձեռնարկների մշակման աշխատանքներին:

Նշված թափուր հաստիքը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) իրավաբանության ոլորտում բարձրագույն կրթություն,

բ) ՀՀ իրավական համակարգի գերազանց իմացություն,

գ) միջազգային և Եվրասիական տնտեսական միության օրենսդրության և օրենսդրական տեխնիկայի իմացությունը կհամարվի առավելություն,

դ) անգլերենի և (կամ) ռուսերենի գերազանց իմացությունը պարտադիր է,

ե) արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատությունում ստացած որակավորումը կամ մասնագիտացումը կհամարվի առավելություն,

զ) մասնագիտական աշխատանքային փորձը կհամարվի առավելություն,

է) թարգմանության բնագավառում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն,

ը) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) կենսագրական (CV)՝ հայերենով կամ համապատասխան օտար լեզվով (անգլերեն կամ ռուսերեն),

բ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, իսկ ուսանողների պարագայում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից տեղեկանք,

գ) նույնականացման քարտի պատճեն կամ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները (բացակայության դեպքում՝ տեղեկանքի պատճեն),

դ) երաշխավորագիր/բնութագիր նախկին աշխատավայրից և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունից, առկայության դեպքում :

Փաստաթղթային փուլն անցած դիմորդները կմասնակցեն գրավոր թեստավորման (անգլերենի, ռուսերենի իմացություն, ընդհանուր իրազեկություն, թարգմանչական և իրավական վերանայման հմտություններ), իսկ թեստավորման արդյունքում ամենաբարձր միավորներ ստացած դիմորդները կիրավիրվեն հարցազրույցի:

Փաստաթղթերի ընդունման **վերջին ժամկետն է՝ 09.09.2016թ.:**

Փաստաթղթերն անհրաժեշտ է ուղարկել **mzargaryan@translation-centre.am** էլեկտրոնային հասցեով, կամ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ Հալաբյան 41ա հասցեով, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: